



Բ. ՏԱՐԻ

ԹԻԻ 8

(20)

ՓԵՏՐՈՒԱՐ 1928

ՍԵՌԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

Ա. — ՍԵՌԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱՃԵՇՏՈՒԹԻՒՆԸ

Սեռային դաստիարակութեան, այսինքն սեռային կեանքի գա. նազան երեւոյթները, ինչպէս նաեւ վտանգները պատանիներուն ծանօթացնելու անհրաժեշտութիւնը, շեշտած էինք ասիւ է առաջ (Տես «Բուժանք» Ա. տարի, Թիւ 11): Թարգմանաբար սուտած էինք նաեւ ֆրանսացի բժիշկի մը այս ուղղութեամբ պատանիներու ըրած դասախօսութիւնը:

Այս Թիւով կը սկսինք հրատարակել, միեւնոյն նիւթին շուրջ առաջին յօդուած մը, զոր գրած է ֆրանսական բժշկական Ակադեմիայի անդամ Տօքթ. Սիրըտէ: Այս առաջին յօդուածով՝ Տօքթ. Սիրըտէ ցոյց կուտայ սեռային դաստիարակութեան անհրաժեշտութիւնը, երկրորդ յօդուածի մը մէջ, զոր պիտի հրատարակենք յաջորդով, կը խօսի սեռային դաստիարակութեան տեսակէտէն մեր դերի մասին: ԽՄԲ.

Բազմաթիւ բնտանիքներու մէջ ստորութիւն է ազոց-ի՛ ձածկել ինչ որ կը վերաբերի սեռային կեանքի գործունէութեան: Սեռային գործարանները կը նկատուին ամօթալի բաներ և կ'աշխատուի ռ և է ուշադրութիւն չգործնել անոնց մասին:

Որքան միամիտ, նոյնքան վտանգաւոր է այս բժշկութեամբ, որ կը կրթին բնկերային կեանքի անխտ սահմանի պայմաններու և բր. նախասական օրէնքներու մասին բացարձակ ազատութեան վրայ: Սեռային բնազդը կը յայտնուի, երկու սեռերուն մէջ ալ, արբունքի

չրջանէն սկսեալ, նոյնիսկ աւելի վաղահաս՝ շնորհիւ ֆեասակար խառնակեցութեան մը կամ խօսակցութիւններու Այդ բնագոյնը կը յայտնուի տարտամ և ընդհատ դրգիւններով, որոնք, եթէ նոյնիսկ անգիտակից են, կ'արթնցնեն տղոց հետաքրքրութիւնը և զանոնք աւելի ուշագիւր կը դարձնեն ամէն բանի, որ պիտի կրնար լուսաբանել այդ խնդրին մասին:

Եթէ իրենց ծնողքին հարցնեն, կը բախին բացարձակ անտարբերութեան կամ անարդար յանդիմանութիւններու: Մինչդեռ, իրենց ընկերները առիթ չեն փախցնել սորվեցնելու խօսքով, պատկերով և մանաւանդ, ափսո՛ս, օրինակը կատարելով: Յաճախ այսպէս է, որ անոնք հասած են մոլութեան, երբ դեռ ոչ ոք զգուշացուցած է զանոնք անբարոյացումէն:

Նոյնը կը պատահի նաեւ պատանեկութեան, երիտասարդութեան շրջանին: Ծնողքները, դաստիարակները չեն հետաքրքրուիր այս հարցերով, չափէն աւելի վստահելով կրօնական զգացումին, բարոյական ընդհանուր տարտամ ծանօթութիւններու վրայ, պայտպանելու համար տղաքը ամէն տեսակ մղումներէ, որոնք պիտի առաջնորդէին զանոնք մոլար ուղի մը:

Երբ մայրը կը տեսնէ որ տղան կը մեծնայ հետզհետէ, ինչ ալ ըլլան իր նախազգաղումները, կը համարձակի, կամաց կամաց, խօսիլ այս հարցին մասին:

Վերջապէս բազմաթիւ ընտանիքներ, նոյնիսկ անոնցմէ, որոնք ամէնէն բարձր բարոյականը կը գաւանդեն, կը մտածեն թէ երիտասարդի մը վայել չէ սրբակրօն ու կոյս մնալ, թէ երկարատեւ ժուժկայութիւն մը կրնայ ֆեասել իր իմացական հաւասարակշռութեան, առողջութեան, կամ, առնուազն, վտանգել իր սերնդագործ կարողութիւններուն աճումը: Այս շատ տարածուած սխալէն մեկնելով, յաճախ ծնողքները թոյլ կուտան, կը քաջալերեն բարձր ամէն շեղում, որոնք բացարձակ հակառակ են իրենց սկզբունքներուն: Արդ՝ այս փորձառութիւնները հեռու չեն ֆեասակար ըլլալէ: Բոլոր բժիշկներն ալ տեսած են անոնց տխուր հետեանքները և ես կրնամ տալ օրինակներ, ուր առաջին քայլին իսկ, սիֆիլիսն ու ջերմամիդութիւնը հարուածած են անխորհեմ երիտասարդները:

Ծիշտ է թէ միշտ այսպէս չի պատահիր, բայց և այնպէս նման օրինակները հազուադիւրս չեն և չեն վերապահուած միայն անոնց, որ չարունակ այդ ճամբան կը յաճախեն:

Երեսուն տարի առաջ, փրոֆ. Ֆուրնիէ, մէկը սիֆիլիսի ամէնէն նշանաւոր բժիշկներէն, 15 առ հարիւր կը հաշուէր մեծ քաղաքնե-

բու սիֆիլիսէ վարակուածներուն թիւը այրերուն մէջ: Անշուշտ այս թիւը շատցաւ անկէջ ի վեր:

Սակայն ո՞վ պիտի համբէ, այսքան որոշ, զոհերը ջերմամիզուեալն, որմէ քիչեր կրցած են խուսափել: Անոր հետեւանքները սիֆիլիսէն նուազ աղիտարներ չեն: Ճիշտ է որ քերամամիզութիւնը, սիֆիլիսին նման, ֆիզիքական ժառանգական պակասութիւններ չի տար, սակայն շատ անգամ պատճառ կը դառնայ ամլութեան: Դարձեալ քերամամիզութիւնն է պատճառը՝ ծննդական գործարաններու թարախահոսութիւններուն, որոնք կը մեղցնեն կիները, կամ ծանր գործողութիւններու, որոնք կ'անդամահատեն վերջնապէս և զոհերը կը ձգեն յաւիտենապէս հիւանդկախ:

Այս փաստերը բաւական են պապանձեցնելու սկեպառիկները, որոնք վիներական հիւանդութիւններու աղէտին հանդէպ անտարբեր, կը զոհանան կրկնելով. «Թողէք որ երիտասարդները ապրին երիտասարդական կեանքը»:

Սակայն, անառակ վարքը ուրիշ հետեւանքներ ալ ունի: Քանի մը տարի այսպէս անպատշաճ կեանք մը անցընելէ յետոյ, երիտասարդներու մեծ մասին խելքը զլուխը կուգայ, և եթէ ունի վարակիչ հիւանդութեան մը բռնուած չեն, այլեւս կը դառնան լուրջ ամուսիններ, բնտանիքի բարի հայրեր: Սակայն քանի՞ քանիներ, կը մնան ֆիզիքապէս և մանտանդ բարոյապէս վնասուած:

Հագուազէպ չէ տեսնել, որ սեռային չարաչար յոգնութիւնները պատճառ դարձած բլլան առաջացեալ սպառումի մը, որ կրնայ հասնիլ մինչեւ կատարեալ անկարողութիւն: Մէկէ աւելի անգամներ ետ տեսայ կիներ, որոնք կը տառապէին զաւակ չունենալնուն համար, արդիւնք՝ իրենց ամուսինին ֆիզիքական անկումին:

Կան մարդիկներ, որ կը պահեն իրենց կորովը, սակայն իրենց բարոյական զգացումը տկարացած է, անոնք կորսնցուցած են յարգանքը կնոջ մասին, և իրենց հստախրութեամբ, իրենց բիրտ պահանջկոտութեամբ կը ստեղծեն անհամերաշխութիւն մը, որ սուղի կը նստի բնտանիքին վրայ:

Կան մարդիկ եւս, որ կ'ախորժին այս ամթապարտ կեանքէն, անոնք կը հրաժարին ամէն փառասիրութիւնէ, ամէն բեղմնաւոր աշխատանքէ և անկարող են գրաւելու ընկերութեան մէջ իրենց տեղը: Ուրիշներ ալ կան, որ կը սիրահարին դժբախտ մոլորեալի մը և կը յաւակնին զայն ճամբու բերելու, կ'ամուսնանան հետը՝ մեծ յուսահատութիւն պատճառելով իրենց բնտանիքին, և յաճախ չեն վարձատրուիր իրենց միամիտ ու վեհանձն ցանկութեանց մէջ:

Թիւել, բարեբախտաբար, քիչ կը պտտահի, բայց աղջիկներու մուտրումն ալ հազուադէպ չէ։ Այդ մուտրումը կը տնտնուի ոչ միայն անոնց մօտ, որոնք աշխատելով դուրսը, փողոցային, գրասենեակներու և աշխատանոցներու խառնակեցութեան մէջ, միշտ փորձութիւններու ենթակայ ըլլալու արդարացումը ունին, այլ նաեւ խըստաբարոյ ընտանիքներու մէջ, ուր աղջիկները, խիստ հակողութեամբ մը, կը թուին պաշտպանուած ըլլալ ամէն անակնկալի դէմ։

Այս դժբախտ աղջիկները ոչ միայն ենթակայ են վեներական ախտերու, բայց կը տիրին ամէն միջավայրի մէջ, այլ նաեւ յդի մընալու, և յշտութեան հետեւանքները այնքան տաժանելի են իրենց ընտանիքին համար, որքան բուն իսկ իրենց համար։ Նոյնիսկ եթէ չվարակուին հիւանդութեամբ մը, չստանան յղութիւն մը, կուսութիւնը կորսնցնելու պարագան պակասութիւն մըն է, որ կրնայ ծանրագէտ վտանգել իրենց ապագան։ Այս դժբախտները, զո՞հ յաճախ միակ սայթաքումի մը, բոլորն ալ կ'արտայայտեն, շատ ուշ, իրենց սրխալին մասին, նոյն տրտունջը. «Եթէ գիտնայի՜ . . .»*)

Տգիտութիւնը, անհոգութիւնը, կը խաղան, իրաւամբ, անհրաժեշտի դեր մը երիտասարդութեան այս տաժանելի սխալներուն մէջ։ Անհրաժեշտ է, որ երկու սեռերուն ալ ցոյց տրուի այն աղէտը, որ կը սպառնայ իրենց։ Քանի կը զարգանայ իրենց բանականութիւնը, պէտք է պաշտպանել զանոնք իրենց տարիքին հետ սաստկացող բռնազգներուն դէմ, ներքին մղումներու, հրապոյրներու և գէշ օրինակներու դէմ։ Կամաց կամաց պէտք է անոնց բացատրել այն վտանգները, որոնց կրնան ենթարկուիլ անառակութեան պատճառով։ Այս նպատակին կը ձգտին և պէտք է ձգտին զանազան կանանց միութիւններու բոլոր ջանքերը։ Նոյնիսկ այս ուղղութեամբ կը քարոզեն և կը դաստիարակեն զանազան կրօնքներու պատկանող պաշտօնեաներու ծանկալի էր, որ երկրորդական վարժարաններու, նոյնիսկ համալսարաններու մէջ, կարելի տեղ մը տրուէր սեռային դաստիարակութեան։ Ամէն դասնախօսի և ամէն համոզումի տէր մարդիկ, կրնան միացնել իրենց ջանքերը այս գիտնին վրայ, բարօրութեանը համար երիտասարդութեան և մարդկային ցեղի ապագային։

Dr. SIREDEY

(*) Հայ աղջիկներն ալ, կեանքի ներկայ պայմաններուն մէջ, օտարներուն չափ ենթակայ են քաղաքական սայթաքումի եւ անոր հետեւանքներուն։ Իրիւ թիշկ, յամալսատիմը կ'ուսնանք ցուով հաստատելու այս պարագան։ Թիչ չէ Թիւր հայ աղջիկներուն, երբեմն շատ գեղատի (15 եւ 14 տարեկան), որոնց մեղի կը դնեն, ոչնչացնելու համար սայթաքումի մը պտուղը կամ դարմանելու համար վարակիչ հիւանդութիւն մը։ Հայ ծնունդները պէտք չէ այն պատրանքը ունենան, թէ իրենց զաւակները, մանաւանդ աղջիկները, տգիտութեան մէջ պահելով, կը պաշտպանեն անոնց անմեղութիւնը։ Երբեք հիմնաւոր էր այս նկատումը անցեալին մէջ, տարբեր պայմաններու տակ, երբ անոնց առարկութեան վտանգ չէր սպառնար։ Բայց ներկայիս, երբ փորձութիւնները դարձեալ կը սպասեն անոնց, անհրաժեշտ է զանոնք զինել այդ վտանգներու դիմակայութեամբ։